

որ իրեն Մատուցոյ օրհնած տղուն հաւատոյ առաջին դասերը կու տայ, ու կը պատմէ անոր կրօնի սրտաշարժ պատմութիւնները, ու կը սորվեցընէ որ պղտի ձեռուրները խաչ բռնէ ու անանկ աղօթք ընէ, և մանկական բերնին թութովէլ տայ ամենասուրբ անունները:

Մայիս պէտք է որ ըլլայ առաջին դաստիարակութիւնը, որ ես աւելի սիրով կը կոչեմ հայրենի դաստիարակութիւն: Մասկայ տան մէջ պիտի ըլլուի. միայն թէ հայրենի տունը միշտ ըլլայ տղուն համար որ ապրիլ կը սկսի սորվիլ, Վարդ մը մաքրութեան, արդարութեան, բարութեան, առաքինութեան, իմաստութեան ու քաղցրութեան. չըլլայ թէ բան մը խանգարէ հոն տեղ անոր սիրտը կամ միտքը այն երջանիկ ատենները որ նախ և առաջ տղուն մտածութիւնը, բանավարութիւնը, խօսակցութիւնը, խրդճ մտանքը կը ձեւանայ, ու միանգամայն կը պատրաստուի անոր մտաւորական և բարոյական կենացը բոլոր նախնական տարիքը:

Չեմ ուզեր այս գլուխը լմնցընել առանց պարտաւորելու իմ ընթերցողներս կարգալու այս ամէն բաներուս վրայօք Ֆենեւոնին Դաստիարակութիւնը Աղջիկացի ըստած գիրքը: Մասկայ գերազանց գիրք մի է. ուղեցի անկէց քանի մը խօսք յիշէլ, բայց տեսայ որ ամբողջ գիրքը օրինակել կ'ըլլար:

Ֆենեւոն անոր մէջ տղոց դաստիարակութիւնը կը սորվեցընէ, բայց ևս առաւել այր և կին դաստիարակները և մայրերը կը կրթէ: Երբ իսկ ժողովրդական տք ու քրիստոնէական վարդապետութեան ուսուցիչները այն գրքին մէջ կը գտնեն հարկաւորագոյն, բարձրագոյն ու բեղմնաւոր վարդապետութիւններ, գլխաւորաբար վեցերորդ, եօթներորդ և ութերորդ գլուխներուն մէջ, պատմութեան գործածութեանը վրայ՝ Սրբի առաջին սկզբնականները ուղի միտք խառնելու համար:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՌՔ

ՊԵՏՔ է համբերել այնպիսի անակնկալ գէպքերու՝ որոնց դարմանը մարդուս խոհեմութենէն չկարողուի. այսպիսի առիթներու մէջ մտածէ որ աս քեզի հանդիպած բանը՝ դեռ քեզմէ զատ չառի՞նք անցած է:

ԿԻՎԵՐՈՆ

ԳԻՏԵՍ բուն խենդը սրն է. — այն՝ որ մէկու մը առաքինութեանը յաղթելու համար՝ ախտերը իրեն օգնական առած կը պատերազմի. վասն զի ինչպէս որ կտրիճ վազողի մը յաղթելու համար աւելի ուժով վազելու է, ասանկ ալ առաքինութեամբ միայն կրնայ մարդ առաքինութեան յաղթել, որ է ըսել՝ գերազանցել:

ՆՈՅՆ

ՊԵՏՔ է աւելի ջանալ որ պատկառելի ըլլաս քան թէ երկեղալի. ինչու որ առջինով պատուաւոր կ'ըլլաս, իսկ երկրորդով բռնաւոր:

ՄՈՒՍՈՆԻՈՅ

Թի որ մէկու մը բնաւորութիւնը կ'ուզես ճանչնալ, եթէ իրեն հետ անձնական ծանօթութիւն ըրած չես՝ նայէ իր ունեցած բարեկամներուն. անոնցմէ զինքն ալ իմացիր. վասն զի կ'ըսէ հին առակը. Ըսէ ինձի քու բարեկամներդ, ես ալ քու ու ինչպիսի ըլլալդ կ'ըսեմ:

ՍԲԵՏԻԱՆՈՅ

Ինչպէս որ պղտոր աղբիւրը մաքուր ջուր չկրնար վազցընել, ասանկ ալ չարամիս ու վատասիրտ մարդը լաւ ու բարի խորհուրդ մը չկրնար տալ:

ԿԱՐԻՄՊԵՐԳԻ

Ինչ որ կ'ընես՝ իմաստնաբար ընելու համար վախճանը գիտէ: — Բաւական չէ աչքիդ գիմարի եղած բանը տեսնել ու անկից զգուշանալ, այլ իմաստութիւնը այս է. ոտքին գիմարը եղածէն աւելի վերջի գալիքը տեսնել:

Չգուշանալու է զրպարտութիւններէն թէ և իրօք սուտ եղած ըլլան. վասն զի մարդկանց մեծ մասը ճշմարտութիւնը չեն փնտրուի, ու զրպարտութեամբ եղած կարծիքին կը հետեւին:

Մարդիկ շատ անգամ աւելի միասուրբ են իրենց գէմ եղած զրպարտութիւններէն, քան թէ յայտնի թշնամիներէն:

Ինչպէս որ ծովի աչուրներու գարնելով օտքիդ տակ եղած բաները տեսնելու կ'արգիլէ, այսպէս ալ բարկութիւնը խելքիդ վրայ դալով միտքդ կը կուրցընէ, իրաւունքը տեսնել չթողուր: